## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 59-Ա

«18» հունիսի 2024 թվականի գյուղ Ամասիա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի և 91-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանին

**որոշում է՝**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի սեփականությունը հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերը ժամանակավոր օգտագործման համար տրամադրել վարձակալության իրավունքով և հաստատել տրամադրման պայմանները՝ համաձայն հավելվածի:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**
**ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝**

*Կողմ՝ 8* *Դեմ՝ 0* *Ձեռնպահ՝ 0*

Հարությունյան Ջ.
Ղուկասյան Ա.
Ախցխեցյան Է.
Մարդոյան Գ.
Զաքարյան Հ.
Արսենյան Զ.
Գևորգյան Հ.
Մարտիրոսյան Հ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՝

Ջ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

« 18 » հունիսի 2024 թվական
գյուղ Ամասիա

**Հավելված**

Հայաստանի Հանրապետության

**Հավելված**

Հայաստանի Հանրապետության

Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանու

2024 թվականի հունիսի 18-ի թիվ 59-Ա որոշման

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

| | Հողամասի գտնվելու վայրը | Հողամասի ծածկագիրը | Հողամասի մակերեսը /հեկտար/ | Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը | Հողամասի օգտագործման նպատակը | Հողամասի կարգը | Մեկնարկային վարձավճարի չափը 1 հա համար /ՀՀ դրամ/ | Հողամասի տրամադրման ժամկետը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Ամասիա բնակավայր | 08-010-0020-0085 | 0,94079 | Գյուղատնտեսական արոտավայր | Գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով | 4-րդ անջրդի | 2040(երկու հազար քառասուն) | 25 տարի |
| 2 | Արեգնադեմ բնակավայր | 08-018-0201-0050 | 54,13654 | Գյուղատնտեսական արոտավայր | Գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով | 5-րդ անջրդի | 675(վեց հարյուր յոթանասունհինգ) | 25 տարի |
| 3 | Գտաշեն բնակավայր | 08-035-0378-0002 | 1,75969 | Գյուղատնտեսական վարելահող | Գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով | 3-րդ անջրդի | 3405(երեք հազար չորս հարյուր հինգ) | 25 տարի |
| 4 | Արդենիս բնակավայր | 08-017-0104-0144 | 1,86395 | Գյուղատնտեսական արոտավայր | Գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով | 4-րդ անջրդի | 2040(երկու հազար քառասուն) | 25 տարի |
| 5 | Արդենիս բնակավայր | 08-017-00104-0138 | 3,78684 | Գյուղատնտեսական խոտհարք | Գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով | 2-րդ անջրդի | 5625(հինգ հազար վեց հարյուր քսանհինգ) | 25 տարի |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 6 | Արդենիս բնակավայր | 08-017-0104-0107 | 25,50807 | Գյուղատնտեսական վարելահող | Գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով | 3-րդ անջրդի | 3810(երեք հազար ութ հարյուր տասը) | 25 տարի |
| 7 | Արդենիս բնակավայր | 08-017-0104-0147 | 2,35929 | Գյուղատնտեսական վարելահող | Գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով | 3-րդ անջրդի | 3810(երեք հազար ութ հարյուր տասը) | 25 տարի |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՝ Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ